ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2019 թվականի N:266-ա ք.Գյումրի

«ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎՌԱՄ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության Շիրակի մարզի դատախազ Կ.Գաբրիելյանի 2019 թվականի մայիսի 27-ի N:64/22-29-19 «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբույժ Գ.Թադևոսյանի աշխատանքում տեղ գտած թերության, դրա պատճառների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու մասին» միջնորդագիրը, անհիմն համարելով «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Վռամ Մելիքյանի 2019 թվականի հունիսի 14-ին ներկայացրած բացատրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու կապակցությամբ «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Վռամ Մելիքյանին հայտարարել խիստ նկատողություն:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է